

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան  
գրականության ինստիտուտի տնօրեն՝  
բանասիրական գիտությունների դոկտոր  
.....Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ



ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի  
արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության  
տեսության բաժնի

30.11.2022թ. նիստի

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Նիստին մասնակցում էին՝

բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը, բ.գ.թ. Վ. Նավասարդյանը, Ք. Հովհաննիսյանը և բ.գ.թ. Ջ. Հայրյանը:

Նիստը վարում էր

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի  
վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

Ամալյա Արմենի Սողոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական  
գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Հոսեյնի)»/ գիտական ղեկավար՝  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Անուշ Բոստոմի Սեդրակյան/

թեկնածուական ատենախոսության քննարկումն ու հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

**Արտահայտվեցին՝** Բ.Գ.Դ., պրոֆ. Ն. Էդոյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ք. Բեջանյանը, Բ.Գ.Թ. Ա. Սողոյանը և Բ.Գ.Թ. Զ. Հայրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսության գլխավոր հիմնահարցն է՝ վերլուծել Էթնիկ հիշողության, հավերժական վերադարձի, ամերիկյան գրական խառնարանի առանձնահատկությունները Էմիգրանտական գրականության համատեքստում, ինչպես նաև բացահայտել Էմիգրանտ դառնալու պատճառները, Էմիգրանտական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, դրա արմատները, ժանրային, լեզվամշակութային առանձնահատկությունները, Էմիգրանտական գրականության մշակութային նմանություններն ու տարբերությունները:

Աշխատանքում ներկայացված է Էթնիկ մշակույթի և գերմշակույթի բախումը, իսկ «կարոտի, ինքնության, պատկանելության, բազմամշակութայնության, այլության և արքորի կոնցեպտների քննությունն օգնում է վեր հանել մի շարք հոգեբանական իրողություններ, որոնց Էմիգրանտն առերեսվում է՝ գաղթական (Էմիգրանտ) դառնալով: Ներգաղթյալի կարևորագույն խնդիրներից մեկը նոր միջավայրում դառնում է ազգային գենետիկ կողի պահպանումը», ինչը ստիպում է ատենախոսին անդրադառնալ նաև փոքր ժողովուրդների խնդրին:

Նշենք, որ Ամալյա Սողոմոնյանի թեկնածուական աշխատանքն առաջինն է, որտեղ զուգահեռաբար գիտնականների և գրաքննադատների կողմից տարիներ շարունակ ուսումնասիրված ռուս և ամերիկացի գրողների կողքին ներկայացվում է աֆղան հեղինակ Խալեդ Հոսեյնիի ստեղծագործությունը:

Առանձնապես հետաքրքրական է նյութի ընտրությունը նմանատիպ հետազոտության համար: Պարզաբանելով, որ եթե «Վլադիմիր Նաբոկովի ստեղծագործությունները քիչ թե շատ հայտնի են ընթերցողին, ապա ժամանակակից աֆղան հեղինակ Խալեդ Հոսեյնին

գրեթե անձանոթ է հայ ընթերցողին», Ամալյա Սողոմոնյանն իր ուսումնասիրության մեջ առավելապես հակված է եղել բացահայտելու, ներկայացնելու քիչ ծանոթ գրական էջեր, ցայսօր չմեկնաբանված դրվագներ, ինչն էլ պայմանավորել է այն փաստը, որ

- աստենախոսը ուսումնասիրության առարկա է դարձրել Նաբոկովի այն ստեղծագործությունները, որոնք պատշաճ ուսումնասիրության չեն արժանացել և կենտրոնացել է էմիգրանտական գրականությանը բնորոշ գծեր պարունակող հեղինակի «Պնին» և «Գունատ կրակ» վեպերի վերլուծությանը:
- Աստենախոսը առանձին գլուխ է նվիրել Սալեդ Հոսեյնի վիպագրությանը՝ խորքային քննության առնելով հեղինակի «Օդապարուկ թոցնողը», «Եվ արձագանքեցին լեռները», «Հազար չքնաղ արևներ» ստեղծագործությունները, ներկայացնելով հեղինակի գեղագիտական համակարգը, աշխարհայացքային ու փիլիսոփայական այն հղումները, որոնցով բնորոշվում են այս գործերը: Ըստ էության, Ամալյա Սողոմոնյանը նոր էջ է բացում հայ քննադատական մտքի պատմության մեջ՝ առաջին անգամ մեզանում քննության առնելով ժամանակակից աֆղան հեղինակի ստեղծագործությունը:

Ամալյա Սողոմոնյանի աստենախոսությունը բաղկացած է *Ներածությունից, երեք հիմնական գլուխներից, որոնք ունեն ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից*: Աշխատանքը շարադրված է 174 էջի վրա, սակայն կան տեխնիկական բացթողումներ / էջ 13-17/:

Ներածությունում աստենախոսը հիմնավորում է թեմայի ընտրությունը, արժևորում է աշխատության նպատակն ու խնդիրները, նկարագրում է հետազոտման մեթոդները, ինչպես նաև՝ գիտական նորույթը: Այստեղ հեղինակը տալիս է երկու հեղինակների ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, ինչպես նաև քննադատական գրականության հակիրճ ակնարկը: Սակայն սեղմագրում և աշխատանքում կան որոշ անհամաձայնություններ /տես՝ արդիականություն, նորույթ, խնդիրներ/: Ներկայացված է միայն գործնական նշանակությունը, բացակայում է տեսականը:

Ատենախոսության *առաջին գլխում* «Էմիգրանտական գրականության առանձնահատկությունները» ներկայացված են էմիգրանտական գրականության առանձնահատկությունները, օտարման և ինքնաօտարման հասկացությունները, ինքնության որոնումը, ինչպես նաև «ամերիկյան երազանքի» իմաստագրկումը: Այս գլուխը ավելի շատ տեսական բնույթ է կրում: Ատենախոսը վերլուծում է էմիգրանտ դառնալու գործընթացը, դրա պատճառները, հետևանքները և գալիս է այն եզրակացության, որ «լինելով սեփական համայնքի, ազգի, հասարակության մի մասը, էմիգրանտներն ապրում են բոլորովին այլ կյանքով, սակայն դառնալով գաղթական՝ նրանք կտրվում են պատմությունից և տեղանքի զգացումից: Նրանց շատ հաճախ չի հաջողվում պատկերել հայրենաբաղձությունը, անումիան, աքսորը, արմատագրկությունը, անհանգստությունը», այսինքն արքորի գրականությունն անհատական է, սուբյեկտիվ և բազմազան:

*Երկրորդ գլուխը՝ «Խալեդ Հոսեյնիի վիպական նորարարությունները էմիգրանտական գրականության համատեքստում»* նվիրված է հայ ընթերցողին ոչ շատ հայտնի ժամանակակից աֆղան գրողի ստեղծագործության ուսումնասիրությանը: Այս գլխում ներկայացվում է Խալեդ Հոսեյնիի վիպական նորարարությունները էմիգրանտական գրականության համատեքստում: Հեղինակի երեք վեպերի՝ «Օղապարուկ թոցնողը», «Եվ արձագանքեցին լեռները», «Հազար չքնաղ արևներ» հիման վրա Սողոմոնյանը փորձ է կատարում բացահայտելու արևելյան մոտիվները, օտարության խնդիրը, մեղքի և պատասխանատվության հարաբերակցությունը՝ վեր հանելով մի շարք «խորքային ու թաքնված իմաստներ, ինչպես նաև հեղինակի գրականագիտական մոտեցումները հերոսների ճակատագրերին և կյանքի շարունակման հնարավոր ելքի փնտրտուքին էմիգրանտական գրականության համատեքստում»:

Ատենախոսը պնդում է, որ «Հոսեյնին կարողանում է պատուհան բացել դեպի իր հերոսների հոգեկան աշխարհն ու թաքուն պահված կրքերը: Նա պատմության առանձին մասերից կարողանում է անբաժանելի ամբողջություն ստանալ ու դիպչել ընթերցողի սրտին: Նա կյանքի դաժանությունը ներկայացնում է թեթևությամբ, առանց ողբերգական երանգ հաղորդելու ու հերոսների հանդեպ խղճահարությամբ լցվելու»:

Երրորդ գլուխը՝ «Ռուս վտարանդին Ամերիկայում» արտոքի վերձանումը եվ հաղթահարումը Վլադիմիր Նաբոկովի «Պնին» եվ «Գունատ կրակ» վեպերում» բացահայտում է Նաբոկովի ստեղծագործության զարգացման փուլերը, նրա գեղագիտական հայացքները, վերլուծում այս երկու վեպերը: Ատենախոսը քննում է երկու ստեղծագործություններում արտոքի, ներքին կորստի թեման՝ եզրահանգելով, որ «երկու տոտալիտար ռեժիմներից փախչելուց հետո Նաբոկովը կարողացավ ադապտացվել արտասահմանում շատ ավելի մեծ հաջողությամբ, քան ներգաղթյալ գրողների մեծ մասը, ոչ առանց անգլերենի և արևմտյան գրական ավանդույթների գերազանց իմացության, իհարկե»:

Ատենախոսությունը վերջանում է ծավալուն եզրակացություններով, որտեղ ի հայտ են բերվում հետազոտության արդյունքները:

Այսպիսով, ամփոփելով տվյալ աշխատության՝ մեր գնահատականը, կարծում ենք, որ ծավալուն աշխատանք է կատարվել, որն ունի գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ:

Նյութի նմանօրինակ լայն ընդգրկմամբ և առաջադրված հիմնահարցերի բազմաձևությամբ հանդերձ, որոնց ստենախոսը կարողացել է իր գիտական աշխատության մեջ համոզիչ լուծումներ տալ, աշխատանքում տեղ են գտել որոշ անհարթություններ և անորոշություններ, որոնց մասին ցանկանում ենք խոսել առավել մանրամասն:

1. Կարծում ենք, և այդպես ընդունված է գիտական աշխատանքներին առաջադրվող պայմաններում, որ տողատակերում պետք է ներկայացվեն հղված ստեղծագործությունների բնօրինակները, ապա նշվեն թարգմանիչները:

2. Որոշակի անհամամասնություն է նկատվում Նաբոկովի վիպագրության վերլուծության պարագայում: Կցանկանայինք, որ ատենախոսության մեջ ավելի խորքային անդրադարձ կատարվեր «Գունատ կրակ» վեպի վերլուծությանն ու ուսումնասիրությանը: Այս վեպի քննությունը փոքր-ինչ մակերեսային է, բացակայում են խորքային դիտարկումներն ու եզրակացությունները: Միգուցե դա է պատճառը, որ սեղմագրում Սողոմոնյանը, հոգեբանորեն հակված լինելով «Լոլիտա» ստեղծագործության բացառիկ դերին ու նշանակությանը Նաբոկովի ստեղծագործական ժառանգության մեջ, շատ հաճախ նշում է ոչ թե «Գունատ կրակ»-ը այլ «Լոլիտա»-ն: (սեղմ. էջ 10)
3. Անհրաժեշտ է աշխատանքում հստակեցնել տեխնիկական ապարատը և խուսափել կրկնողություններից ու տառասխալներից: Օրինակ, էջ 81-ում հաղթահրումը, էջ 171-ում օդապորուկ և այլն: Գրականության ցանկում ներկայացված են աշխատություններ՝ ոչ լիարժեք նկարագրությամբ: Որոշ ցիտումներ մնացել են առանց հղումների (էջ 81, 83, 84, 86, 87, 93, 172 և այլն), բովանդակության մեջ դուրս է մնացել 3.1 կետը:
4. Եզրակացությունները չպետք է կրկնեն աշխատանքի ընդհանուր դրույթները և պետք է ներկայացվեն կետերով:

Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ առկա է առաջադրված թեմայի շրջանակներում հետագա ուսումնասիրության հեռանկարը, ինչին անդրադառնալիս խորհուրդ կտանք ատենախոսին հաշվի առնել և ուղղել նշված թերությունները:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ բոլոր դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը: Ատենախոսությունը գիտական լուրջ խոսք է, խիստ հետաքրքիր, համապատասխանում է նմանատիպ աշխատություններին առաջադրվող

պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Որոշեցին՝ Ամալյա Արմենի Սողոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Հոսեյնի)» թեկնածուական ատենախոսությունը բավարարում է Ժ.01.07. /Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ատենախոսությանը ներկայացվող պահանջները և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Ք. Բեջանյանը



Հաստատում եմ Բ.Գ.Թ., դոցենտ Ք. Բեջանյանի ստորագրությունը  
Գրականության ինստիտուտի գիտքարտուղար՝ Բ.Գ.Թ. Չ. Որսկանյան

30. 11. 2022